

հերիք է, որ ամենէն գռեհիկ թերթը երկու սիւնակ վայրահաչ գրգռութեամբ մը այդ հանդէսը օգտական հոչակէ հայրենիքին շահերուն: Անշուշտ հարիւր տարի առաջ ալ թուրքը թուրք էր, այսինքն՝ վաւերական հայրը այժմու գլխարկաւոր, պարահանդէսի հանդերձանքով ջարդ հրամայող հանրապետութեան նախագահին. ու թուրք էր աւելի խոր ու հարազատ ձեւով, բայց կը կենար ու կը հարցնէր, երբ առջին բերուէին ձեռնակապ մարդեր, մորթելու համար, մեղքերը այդ թշուառականներուն, մա՛նաւանդ վարձքին տեսակը, երկրի՝ ինչպէս երկինքի մէջ: Սոսկական անհատներէն վեր, որոնք ամենէն մռայլ շրջաններուն դէմ են զացած հրահանգին, թելադրանքին, ժահրի պատուաստին ու պաշտպանած դրացին, ապուր ուսող բարեկամը, հայր. պետական աւագ անձնաւորութիւն մը ինքզինքը չէր խաբեր, երբ նամագի չգիջանելով հանդերձ, իր պալատին ստորայարկերուն մէջ դասակդասակ մանչեր ու աղջիկներ բոյժի կը դնէր՝ իր անկողինին համար: Ու միւս կողմէ կը հաւատար իր ըրածին, երկիրը արեւմտացնելու, այդ դերին ամենէն ընդունակ տարրերուն ձեռքովը, զանոնք պահելով իր պաշտպանութեանը ծիրին մէջ, որքան ատեն որ անպատեհութիւն չէին ներկայացներ: ԺԹ՝⁹² դարու կէսին թրքական հողերուն վրայ ծաղկող ազատականութեան արմատները այս ենթաշխարհին ապրանքն են եւ ոչ թէ ցեղային չփացլած, անգոյ առաքինութիւններու: Մենք չչինցեինք անշուշտ իրենց հայրենիքը, - կը հասկնամ 1900ի Իզմիրը, Պոլիսը, Պրուսան, Էսիրնէն, Սվաքը, Տիարպէֆիրը, Երզրումը, Ատանան, Դամասկոսն ու Պէյրութը ու բոլոր Երուսաղէմը: Այս քաղաքները դիմագիծ մը ունէին թուրքերէն առաջ ալ: Իրենց հինգ դարերուն յաւելումը, - պէտք է սպասել, ատիկա տեսնել, ճշդել կարենալու համար: Եւ սակայն առնուազն անգթութիւն է մեզ մեղադրել այդ պատկերին իբրեւ հեղինակ: 1940ին, ամերիկացի ճամբորդներ պատմած են այդ հողերուն երեսին կատարուող փոփոխութիւնները, զգացած ալ հոգին, որ այդ շէնքերուն ներ-